ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 սեպտեմբերի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

117
(3326)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ՎՃԱՐԵԼ

Ազգայի ժողովի աշխատակազմը արդեն մեկ ամիս է, ինչ ունի նոր աշխատակազմի ղեկավար. Դավիթ Համբարյանը նշանակվել է ԱԺ նախագահ Ռուբեն Ռուբինյանի կողմից 2026 թվականի օգոստոսի 3-ին՝ փոխարինելով Ալեն Սիմոնյանի մտերիմ ընկեր Դավիթ Առաքելյանին:

Առաջին հայացքից ստեղծվում է այն տպավորությունը, որ Դավիթ Համբարյանը իր կենսագրականով եւ աշխատանքային գործունեությամբ պետք է հստակ հասկանար պետական կառավարման համակարգը եւ Ազգային ժողովի առանձնահատկությունները, իր վստահությունը ամրապնդում էր իր տված առաջին հարցազրույցի ժամանակ՝ նշելով իր փորձն ու հմտությունները: Առաջին հարցազրույցի ժամանակ նա նշում էր, որ իր փորձը Երեւան քաղաքի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում հիմք է իրեն տալիս վստահ լինել, որ կկարողանա ղեկավարել նաեւ Ազգային ժողովի աշխատակազմը: Թեեւ նա 2 տարի է աշխատել այնտեղ եւ ընդհանրապես գրեթե բոլոր պաշտոններում կարճաժամկետ կառավարում է իրականացրել:

«Ժողովուրդ» օրաթերթի ունեցած տեղեկությունների համաձայն՝ հենց առաջին օրվանից Դավիթ Համբարյանը սկսել է վերստուգողական գործողություններ իրականացնել նախկին ղեկավար Դավիթ Առաքելյանի կողմից իրականացված ծախսերի, որոշումների վերաբերյալ՝ հարցականի տակ դնելով ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացրած աշխատանքները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Սյունիքի մարզի Ծավ համայնքում խմելու ջրի մեջ սնդիկ է հայտնաբերվել. իշխանական աղբյուրները պնդում են՝ Փաշինյանը վրդովված է, իսկ պատասխանատուները դեռ փնտրում են՝ որտեղից է հայտնվել թույնը: Առողջապահության նախարարությունը նախորդ օրը պաշտոնապես հայտարարեց, որ Սյունիքի մարզի Կապան համայնքի Ծավ բնակավայրի ջրում սնդիկ է հայտնաբերվել, եւ հորդորեց բնակիչներին չօգտագործել այդ ջուրը խմելու նպատակով: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ իրավիճակը շատ ավելի լուրջ է, քան ներկայացվում է պաշտոնական հաղորդագրություններում: Մեր տեղեկություններով՝ առողջապահական համակարգում ջրի վտանգավորության մասին ահազանգը ստացվել է անակնկալ, ինչից հետո միայն համապատասխան կառույցները սկսել են ակտիվորեն պարզել, թե որտեղից կարող էր սնդիկը հայտնվել բնակիչների կողմից օգտագործվող ջրի մեջ: Այս պահին մի քանի վարկած է քննարկվում, եւ ուսումնասիրությունները շարունակվում են: Ընդհուպ հարեւան, բայց ոչ բարեկամների կողմից կողմնակի միջամտության թեման: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ հարցն արդեն հասել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կոտայքի մարզում ՔՊ-ի առաջիկա ՏԻՄ ընտրությունների թեկնածուների հարցում պատկերը ամբողջությամբ չի ուրվագծվում: Եթե Հրազդանի, Ծաղկաձորի եւ Արզնիի մասով իշխանությունն արդեն որոշակի որոշումներ ունի, ապա ամենամեծ հարցականը շարունակում է մնալ Աբովյանը: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ երկար քննարկումներից հետո ՔՊ-ում, կարծես թե, կանգ են առել Հովհաննես Աբրահամյանի թեկնածության վրա: Նա «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ղեկավարն է: Սակայն ուշագրավն այն է, որ ՔՊ-ն Աբովյանի գործող քաղաքապետ Էդուարդ Բաբայանի հարցում այլ մարտավարություն է ընտրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունը մտադիր չէ նրա դեմ կոշտ պայքար մղել կամ բանակցությունների միջոցով նրան ՔՊ-ի թեկնածու դարձնել: Ընդհակառակը, Բաբայանին, ըստ իշխանական աղբյուրների, «ազատ են թողնելու»: Այսինքն՝ Էդուարդ Բաբայանը, ամենայն հավանականությամբ, կմասնակցի ընտրություններին սեփական նախաձեռնությամբ, իսկ ՔՊ-ն, ըստ էության, չի խոչընդոտի նրա ընտրարշավին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել դատավորների գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարագրերը՝ ներկայացնելով, թե տարիների ընթացքում ինչպես է փոխվել նրանց ունեցվածքը: Այս անգամ ուսումնասիրել ենք Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Իվան Բաղմանյանի 2021-2025 թվականների հայտարարագրերը: Իվան Բաղմանյանը մինչեւ 2023 թվականը աշխատել է Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, իսկ 2023 թվականի հուլիսի 27-ից նշանակվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր: 2021 թվականի վերջին Իվան Բաղմանյանի հայտարարագրում առկա է եղել համատեղ սեփականության իրավունքով 7 անշարժ գույք: Դրանցից չորսը Տավուշի մարզի Գանձաքար բնակավայրում գտնվող հողամասեր են, մեկը՝ նույն բնակավայրում գտնվող անհատական բնակելի տուն՝ տնտեսական շինություններով, իսկ երկու անշարժ գույքը բնակարաններ են՝ մեկը Տավուշի մարզի Իջեւան քաղաքում, մյուսը՝ Երեւանի Դավթաշեն վարչական շրջանում: Գանձաքարի հողամասերն ու բնակելի տունը ձեռք են բերվել հիմնականում 2006 թվականին, Իջեւանի բնակարանը՝ 2009 թվականին, իսկ Դավթաշենի բնակարանը՝ 2019 թվականի մարտի 15-ին՝ գնման եղանակով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ ԴՐՍԵՎՈՐԵՆ»

ArmLur.am-ը զրուցել է ՔՊ-ական պատգամավոր, Գյումրիում ավագանու նախկին անդամ Սարիկ Մինասյանի հետ Գյումրու սպասվող ընտրությունների մասին:

- Տեւական ժամանակ է՝ Գյումրին կարծես թե չի կառավարվում: Համայնքապետ Վարդան Ղուկասյանը կալանքի տակ է, նրա նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում: Միեւնույն ժամանակ, գյումրեցիներից ահազանգեր ենք ստանում, որ քաղաքը գտնվում է անտեր վիճակում, որ ՔՊ-ն թույլ չի տալիս որեւէ մեկին աշխատել՝ նպատակ ունենալով նոր համայնքապետ ընտրել եւ իր թեկնածուին բերել: Որքանո՞վ է այս տեղեկությունը համապատասխանում իրականությանը, եւ արդյո՞ք իշխանությունը մտադիր է Գյումրիում նոր ընտրություններ անցկացնել:

- Տեսեք, քաղաքում, իրոք, խնդիրներ կան, բայց դրանք կապված չեն համայնքի ղեկավարի՝ տնային կալանքի հետ: Համայնքապետարանում գործում են համայնքային ծառայողներ, իսկ համայնքի ղեկավարի տեղակալն այս պահին իրականացնում է համայնքի ղեկավարի պարտականությունները: Ես կարծում եմ՝ այստեղ, առաջին հերթին, աշխատանքային փորձի խնդիր կա: Եթե որեւէ մեկը պնդում է, որ ՔՊ-ն թույլ չի տալիս աշխատել, թող հստակ մատնանշի որեւէ լավ ծրագիր, որը ցանկացել են իրականացնել Գյումրիի եւ գյումրեցիների համար, եւ որի իրականացմանը ՔՊ-ն խոչընդոտել է: Իրենց ձախողումներն ու անհաջողությունները այլ մարդկանց վրա բարդելը՝ սեփական անգործությունն արդարացնելու նպատակով, ճիշտ մոտեցում չէ: Ինձ էլ են գյումրեցիները ամեն օր գրում եւ զանգահարում ու խնդրում, որպեսզի Գյումրիում շատ արագ արտահերթ ընտրություններ իրականացվեն, լինի իշխանափոխություն, եւ գյումրեցիներն ու նրանց երեխաներն ունենան իրենց արժանի իշխանություն, որը հոգ կտանի քաղաքացիների անվտանգության, բարեկեցության եւ քաղաքային ենթակառուցվածքների մասին:

- Իսկ ՔՊ-ն ունի՞ քաղաքական որոշում՝ Գյումրիում արտահերթ ընտրություններ անցկացնելու վերաբերյալ:

- Եթե ուզում եք ընտրություն իրականացնել, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված որեւէ քայլ մենք, բնականաբար, չենք կարող շրջանցել: Ես կարծում եմ՝ ներկայիս Գյումրու իշխանությունները պետք է հասկանան, որ չեն կարողացել իրենց վրա դրված պարտականությունները պատշաճ իրականացնել: Նրանք պետք է քաղաքական կամք դրսեւորեն եւ հրաժարվեն իրենց ներկայիս կարգավիճակից:

- Բայց Վարդան Ղուկասյանին համայնքապետ էր ընտրել Գյումրու ավագանին: Ընդդիմությունն ասում է՝ ՔՊ-ն փորձում է ճնշումների միջոցով փոխել այդ ընտրության արդյունքը: Ինչո՞ւ ՔՊ-ն չի ընդունում Վարդան Ղուկասյանի ընտրության արդյունքը:

- Վարդան Ղուկասյանին Գյումրիի համայնքապետ չի ընտրել ամբողջ Գյումրին: Տեղի են ունեցել ավագանու ընտրություններ, որոնց մասնակցել է 9 քաղաքական ուժ: Այդ 9 ուժերից նվազագույն շեմը հաղթահարել է 5-ը:

Ամենաշատ ձայները ստացել է «Քաղաքացիական պայմանագիրը»՝ շուրջ 17 հազար 200 ձայն: Դրանից հետո չորս ուժեր միավորվել են, որպեսզի կարողանան ընդամենը մոտ 2-3 հազար ձայնի տարբերությամբ առավելություն ստանալ եւ համայնքապետ ընտրել:Հայաստանի անկախության պատմության մեջ, կարծում եմ, ՏԻՄ ընտրությունների համատեքստում նման իրավիճակ դեռ չի եղել, երբ այդքան քաղաքական ուժեր միավորվեն՝ համայնքապետ ընտրելու համար:

- Բայց այդ չորս ուժերը պնդում են, որ ներկայացնում են գյումրեցիների կամքը:

- Խոսել ամբողջ Գյումրու անունից, կարծում եմ, սխալ է: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն ունեն իրենց առանձնահատկությունները: Յուրաքանչյուր թեկնածու ունի իր ազգականները, հարեւանները, ընկերները, ծանոթները: Նրանք ասում են՝ «ես ավագանի եմ, ընտրեք ինձ»: Ընտրական ցուցակում 33 ավագանի է լինում: Եթե այդ ուժերն իսկապես ունենային 33 թեկնածու, եւ յուրաքանչյուրն ունենար առնվազն 100 վստահելի մարդ, ապա կարող էին ապահովել շուրջ 3300 ձայն: Բայց նման իրավիճակ չի եղել: Հետեւաբար, խոսել ամբողջ գյումրեցիների անունից, կարծում եմ, բարոյական չէ:

- Քննադատություններ են հնչում նաեւ այն մասին, որ ՔՊ-ն հավաքում է բոլոր այն անձանց, ովքեր կարողացել են Գյումրիում հաղթանակ ապահովել Վարդան Ղուկասյանի համար: Օրինակ՝ Վարդան Ղուկասյանը, Մարտուն Գրիգորյանը եւ այլք այսօր կալանքի տակ են: Ընդդիմությունը պնդում է, որ ամեն ինչ արվում է, որպեսզի դուք կրկին առաջադրվեք Գյումրիի համայնքապետի պաշտոնում:

- Կարծում եմ՝ հարցը սխալ եք ձեւակերպում: Իրավական գործընթացների մասով ես չեմ ցանկանում խորանալ: Կլինեն դատավարություններ, կլինեն դատավճիռներ, եւ բոլորս կիմանանք՝ իրականում ինչ է տեղի ունեցել: Կան ձայնագրություններ: Մարդիկ ասում են, որ դրանք կեղծ են, բայց, որքան հասկանում եմ, փորձաքննության չեն ուղարկվել, որովհետեւ ձայնագրությունների իսկությունը պատշաճ կերպով կասկածի տակ չի դրվել: Եթե եղել են ընտրակաշառքի դեպքեր, ապա մարդիկ դրա համար պետք է պատժվեն: Այստեղ ես միանշանակ կողմ եմ օրենքի գերակայությանը: Կլինեն դատավճիռներ, եւ այդ ժամանակ բոլորս կիմանանք իրականությունը: Այս պահին չեմ ուզում խորանալ իրավական գործընթացների մեջ:

- Այժմ Ազգային ժողովում քննարկվում է Տարածքային կառավարման եւ շրջակա միջավայրի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածության հարցը: «Ուժեղ Հայաստանը» առաջադրել է գյումրեցի Ռուբեն Մխիթարյանի թեկնածությունը: Նրա հասցեին իշխանության ներկայացուցիչները նշում են, որ նա աշխատել է Վարդան Ղուկասյանի հետ եւ պաշտպանել է նրա շահերը: Արդյո՞ք սա չի նշանակում, որ ՔՊ-ն բացասական վերաբերմունք ունի Ռուբեն Մխիթարյանի նկատմամբ եւ կարող է խոչընդոտել նրա պաշտոնավորմանը:

- Կարծում եմ՝ նախօրոք կարծիք կազմել, որ Ռուբեն Մխիթարյանը չի կարողանալու պաշտոն զբաղեցնել, ճիշտ չէ: Նրա ելույթներն ու գործունեությունը ցույց են տալիս իր մոտեցումները: Էստեղ խնդիրը մեկ այլ հարցում է: Պարոն Մխիթարյանը սկզբում հայտարարեց, որ Վարդան Ղուկասյանի հետ թիմակիցներ են եղել, իսկ հետո սկսեց որոշակիորեն դիստանցավորվել: Եթե ասում ես, որ թիմակից ես, ապա պետք է նաեւ քաղաքական գնահատական տաս թիմակցիդ գործունեությանը, նրա արած քայլերին, քաղաքական որոշումներին եւ այդ քաղաքական հետագծի համար որոշակի պատասխանատվություն կրես: Երբ նա սկսեց դիստանցավորվել, ավելի շատ հարցեր սկսեցին առաջանալ:

- Այսինքն՝ Ռուբեն Մխիթարյանի թեկնածության վերաբերյալ ՔՊ խմբակցությունը դեռեւս հստակ դիրքորոշում չունի՞:

- Այո, Ռուբեն Մխիթարյանի հետ կապված խմբակցությունը դեռեւս վերջնական դիրքորոշում չունի:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԵՄ-Ն ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԱՋԱԿՑԵԼ

Սեպտեմբերի 15-ին Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոնը ամփոփել է Հայաստանի այցը՝ անցկացնելով խորհրդակցություններ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի եւ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի հետ, ինչպես նաեւ հանդիպել Արցախից տեղահանվածների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, գրում է Լուրեր.com-ը: Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոն ամփոփել է Հայաստանում անցկացրած հերթական խորհրդակցությունները՝նշելով, որ հանդիպումներ է ունեցել փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի, ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի եւ փորձագիտական համայնքի ներկայացուցիչների հետ:

Գրոնոն նշել է, որ Երեւանում կրկին հնարավորություն է ունեցել հանդիպելու Արցախից տեղահանված հայերի խմբերի եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ տեղեկանալու նրանց իրավիճակի եւ հուզող հարցերի մասին: ԵՄ հատուկ ներկայացուցիչը նաեւ այցելել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան: Նրա խոսքով՝ այցը հնարավորություն է տվել տեղում տեսնելու հայկական մշակույթի հարուստ պատմական ժառանգությունը, այդ թվում՝ հակամարտությունից տուժած շրջաններից ծագող նմուշներ: «ԵՄ-ն կշարունակի աշխատանքը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկկողմ խաղաղության գործընթացին աջակցելու ուղղությամբ»,- նշել է Գրոնոն:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես տեղեկացրել էր ArmLur.am-ը, հոկտեմբերի 25-ին ՏԻՄ ընտրություններ կանցկացվեն նաեւ Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքում: Նախորդ ՏԻՄ ընտրություններում ձայների մեծամասնությամբ համայնքի ղեկավար էր ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից առաջադրված Ղազար Ղազարյանը: Մինչ այդ նա շուրջ 13 տարի ղեկավարել էր Ջրարբի համայնքը, եւս երեք տարի էլ զբաղեցրել էր նույն բնակավայրի ղեկավարի տեղակալի պաշտոնը:

Ղազարյանի պաշտոնավարման ընթացքում նրա անունը հայտնվել է նաեւ իրավապահ համակարգի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, ինչպես 2022թ. գրել էր ArmLur.am-ը, նրան մեղադրանք էր առաջադրվել համայնքին պատկանող չորս հողատարածքների ինքնակամ զավթումը չկասեցնելու համար: ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների ընթացքում պարզվել էր, որ Արաքս համայնքին պատկանող չորս հողատարածքներ զավթվել են, իսկ այդ տարածքներում իրականացվել են բնական ռեսուրսների ապօրինի օգտագործման աշխատանքներ, ինչի հետեւանքով տեղի էր ունեցել հողի դեգրադացիա: Ըստ մեղադրանքի՝ Ղազարյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ունենալով հողօգտագործման ոլորտում համապատասխան լիազորություններ, դիտավորությամբ չի կիրառել դրանք եւ միջոցներ չի ձեռնարկել հողամասերի զավթումը կասեցնելու ուղղությամբ: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

Ղազարյանի շուրջ աղմկահարույց մեկ այլ դեպք էլ մամուլում շրջանառվեց այս տարվա գարնանը: Լրագրող Վահե Մակարյանը հրապարակել էր տեղեկություն Արաքս համայնքում տեղի ունեցած ծեծկռտուքի մասին, որի մասնակիցներից մեկը, ըստ հրապարակման, եղել էր հենց համայնքի ղեկավարը: Ըստ լրագրողի՝ Ղազարյանը վեճի էր բռնվել մի շինարարի հետ, ինչից հետո իրավիճակը վերածվել էր ծեծկռտուքի: Հրապարակման համաձայն՝ համայնքի ղեկավարը ոտքով հարվածել էր մեքենաներին, քաշքշել շինարարին, ինչից հետո գյուղացիները ծեծի էին ենթարկել նրան: Վերջում, ըստ նույն հրապարակման, Ղազարյանը վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց: Լրագրողը կապ էր հաստատել նաեւ Ղազարյանի հետ՝ միջադեպի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Համայնքի ղեկավարը հերքել էր ծեծկռտուքի, վնասվածքներ ստանալու եւ հիվանդանոց տեղափոխվելու մասին տեղեկությունները: Միաժամանակ նա նշել էր, որ տեղի ունեցածը աշխատանքային միջադեպ է եղել, եւ հաստատել էր, որ վրդովվել էր շինարարի աշխատանքից՝ այն պատշաճ չկատարելու պատճառով:

Միջադեպի վերաբերյալ, սակայն, այլ պաշտոնական տվյալներ կամ հայտարարություններ առայժմ չեն հրապարակվել:

Այս պահին, Ղազար Ղազարյանից բացի, Արաքս համայնքի ղեկավարի պաշտոնի համար այլ թեկնածուների անուններ հայտնի չեն:

ԱՆՆԱ ՀԱՆՅԱՆ

ՉԻ ԽԶԻ ԴԱՐԱՎՈՐ ԿԱՊԵՐԸ

Սերբիան խոստովանել է Ռուսաստանի հետ դարավոր կապերը հետեւելու հրաժարվելու մասին, գրում է Լուրեր.com-ը: Սերբիայի կառավարության մշակութային դիվանագիտության գրասենյակի ղեկավար Առնո Գույոնը հայտարարել է, որ նախագահ Ալեքսանդր Վուչիչը մերժում է Ռուսաստանի պատմության եւ մշակույթի իրադարձությունները, ընդգծելով երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունները: Առաջին փոխվարչապետ Ալեքսանդր Վուլինը նաեւ պնդել է, որ Բելգրադը չի ցանկանում դառնալ Արեւմուտքի «խամաճիկ» եւ գնում է իր սեփական անկախ քաղաքականությունը:

Սերբիան չի պատրաստվում հրաժարվել Ռուսաստանի հետ ձեւավորված դարավոր հարաբերություններից: Այս մասին Եկատերինբուրգում անցկացվող Երիտասարդության միջազգային փառատոնի ժամանակ հայտարարել է Սերբիայի կառավարության հանրային եւ մշակութային դիվանագիտության գրասենյակի ղեկավար Առնո Գույոնը, հայտնում է ՌԻԱ Նովոստին:

Գույոնի խոսքով՝ Սերբիայի նախագահ Ալեքսանդր Վուչիչը որոշել է չհետեւել այն քաղաքականությանը, որը ենթադրում է Ռուսաստանի պատմության եւ մշակույթի մերժում ու ռուսների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձեւավորում: Նա ընդգծել է, որ Սերբիային եւ Ռուսաստանին կապում են բարեկամության բազմադարյա հարաբերություններ:

Ավելի վաղ Սերբիայի նախկին փոխվարչապետ Ալեքսանդր Վուլինը հայտարարել էր, որ Բելգրադը չի ցանկանում դառնալ Արեւմուտքի «խամաճիկը»: Նրա խոսքով՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունները Սերբիայի համար հնարավորություն են վերահաստատելու սեփական անկախ քաղաքականությունը:

ԽՈՍՏԱՅԵԼ Է ԱՔԱԿՑԵԼ

Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին ուղարկած ուղերձով խոստացել է անփոփոխ աջակցել ՌԴ-ին եւ ակնհայտորեն վստահում է դրա հաղթանակին: Նա կոչ է արել ընդլայնել Փհենյանի եւ Մոսկվայի միջեւ դաշնակցային համագործակցությունը:

Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընը հայտարարել է, որ շարունակելու է անփոփոխ աջակցություն ցուցաբերել Ռուսաստանին եւ ռուս ժողովրդին: Այս մասին հայտնում է ՌԻԱ Նովոստին՝ հղում անելով Կորեայի կենտրոնական լրատվական գործակալությանը (KCNA):

Կիմ Չեն Ընը համապատասխան ուղերձն ուղարկել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ ի պատասխան ԿԺԴՀ-ի հիմնադրման 78-րդ տարեդարձի կապակցությամբ ստացած շնորհավորանքի: Նա վստահություն է հայտնել, որ Ռուսաստանը կհաղթի այն պայքարում, որը, իր ձեւակերպմամբ, մղում է երկրի անվտանգության շահերի եւ միջազգային արդարության պաշտպանության համար: ԿԺԴՀ-ի առաջնորդը նաեւ ընդգծել է, որ Փհենյանը ձգտում է շարունակել ընդլայնել եւ խորացնել Մոսկվայի հետ համագործակցությունը՝ հիմնված փոխադարձ աջակցության եւ դաշնակցային հարաբերությունների վրա:

ԻՆՉ ՈՒՆԻ

ՕՊԵՐԼԻԱԶՈՐԻՑ՝ ԴԱՏԱՎՈՐ

Դատավորի դաշտոնը տարիների ընթացքում փոխել է նաեւ Լիանա Ներսիսյանի հայտարարագրի ֆինանսական դաշտերը: Եթե 2021 թվականին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի անունով սեփականության իրավունքով անշարժ գույք եւ ավտոմեքենա չկար, արդա 2025 թվականի հայտարարագրում արդեն հայտնվում են Սեւանի հողամաս, Mercedes-Benz եւ 4 մլն դրամ կանխիկ գումարը:

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել դատավորների գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրերը՝ փորձելով հասկանալ, թե պաշտոնավարման տարիներին ինչպես է փոխվել նրանց ունեցվածքը:

Նախկին օպերլիազոր Լիանա Ներսիսյանը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր է 2019 թվականի հունվարի 23-ից: Ըստ court.am-ում հրապարակված տվյալների՝ նրա վարկանիշը 5 է, ինչը բավական ցածր ցուցանիշ է:

2021 թվական. գույք չկար, բայց կար 13.5 հազար դոլար կանխիկ

2021 թվականի հայտարարագրով Լիանա Ներսիսյանն իր անունով որեւէ անշարժ գույք չէր հայտարարագրել: Չկար նաեւ ավտոմեքենա: Տարվա ընթացքում նոր գույք չէր ձեռք բերել եւ որեւէ գույք չէր օտարել:

Միեւնույն ժամանակ, դատավորը հայտարարագրել էր, որ ավելի քան 90 օր փաստացի տիրապետել է Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում գտնվող անհատական բնակելի տան՝ հողամասի վրա կառուցված տնտեսական շինություններով:

2021 թվականի տարեվերջին նրա բանկային հաշվում մնացել էր ընդամենը 500 հազար 6 դրամ, մինչդեռ տարվա սկզբին հաշվի մնացորդը եղել էր 1 մլն 300 հազար 52 դրամ:

Փոխարենը, կանխիկ դոլարն ավելացել էր: Եթե տարվա սկզբին հայտարարագրված էր 10 հազար ԱՄՆ դոլար, ապա տարեվերջին արդեն՝ 13 հազար 500 ԱՄՆ դոլար:

Նրա 2021 թվականի ընդհանուր եկամուտը կազմել էր 10 մլն 205 հազար 738 դրամ, որից 8 մլն 772 հազար 33 դրամը եղել է աշխատանքի վարձատրություն, իսկ 3 հազար 500 ԱՄՆ դոլարը՝ նվիրատվություն կամ օգնություն:

2025 թվական. ունեցվածքի պատկերը փոխվել է

Չորս տարի անց դատավորի հայտարարագրում արդեն բոլորովին այլ պատկեր է:

2025 թվականի սկզբին եւ տարեվերջին Լիանա Ներսիսյանի սեփականության ներքո եղել է Սեւանում գտնվող հողամաս, որը ձեռք է բերել 2024 թվականի հունվարի 12-ին:

Նրա ունեցվածքում հայտնվել է նաեւ 2019 թվականի արտադրության Mercedes-Benz ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2023 թվականի փետրվարի 10-ին:

Կանխիկը՝ 2-ից 4 մլն դրամ

2025 թվականին Ներսիսյանի կանխիկ դրամը նույնպես աճել է: Տարվա սկզբին նա հայտարարագրել էր 2 մլն դրամ, իսկ տարեվերջին՝ արդեն 4 մլն դրամ:

Բանկային հաշիվների մնացորդները տարվա վերջում կազմել են համապատասխանաբար 168 հազար 180 դրամ, 770 դրամ եւ 911 հազար 137.75 դրամ:

2025 թվականի ընդհանուր եկամուտը կազմել է 16 մլն 666 հազար 973 դրամ, որից 13 մլն 777 հազար 775 դրամը եղել է աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված վճարումներ, իսկ 2 մլն 889 հազար 198 դրամը՝ եկամտային հարկի վերադարձ: Միաժամանակ, դատավորն ունի 38 մլն 531 հազար 651.2 դրամի վարկային պարտավորություն, որի նպատակային նշանակությունը կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքն է:

Այսպիսով, 2021-ից 2025 թվականներին Լիանա Ներսիսյանի հայտարարագրում էական փոփոխություններ են արձանագրվել. եթե 2021-ին նրա անունով անշարժ գույք ու ավտոմեքենա չկար, ապա 2025-ին արդեն առկա են Սեւանի հողամաս եւ Mercedes-Benz, կանխիկ դրամը հասել է 4 մլն դրամի: Ու այս ամենի կողքին՝ ըստ court.am-ի հրապարակած տվյալների, դատավորի վարկանիշը 5 է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը սեպտեմբերի 14-ին արտահերթ նիստ է գումարել: Երկրորդ ընթերցմամբ քննարկվել է ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը տեղեկացրել է, որ նախագծի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում առաջարկներ չեն ներկայացվել:

Նախագծի ընդունման նպատակն է կատարելագործել Կառավարության անդամների երդման տեքստի իրավական բովանդակությունը՝ դրանում առավել հստակ արտացոլելով պետականության ամրապնդման, հանրային եւ պետական շահերի պաշտպանության, ինչպես նաեւ ՀՀ զարգացմանն ու հարատեւությանն ուղղված արժեքները:

Օրենքի նախագիծը ստացել է դրական եզրակացություն:

ԽՈՑԵԼ ԵՆ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔ

ՆԱՏՕ-ի կործանիչները Լիտվայի օդային տարածքում խոցել են Բելառուսից ներթափանցած անօդաչու թռչող սարք: Լիտվայի արտգործնախարար Կեստուտիս Բուդրիսը հայտարարել է, որ ՆԱՏՕ-ն զգոն է, հանձնառու եւ պատրաստ: Լիտվայի նախագահ Գիտանաս Նաուսեդան եւս հաստատել է, որ անօդաչուն ոչնչացվել է դաշնակիցների կործանիչների կողմից:

Լիտվայի Ճգնաժամերի կառավարման ազգային կենտրոնի տվյալներով՝ անօդաչուն Բելառուսից մուտք է գործել երկրի օդային տարածք, անցել Լենտվարիսի եւ Տրակայ շրջանի ուղղությամբ, ապա ընկել Կաունասի շրջանի Պրատկունայ գյուղի մոտ: Սա առաջին դեպքն է, երբ Լիտվայի տարածքում խոցվել է անօդաչու: Մոսկվան միջադեպի վերաբերյալ դեռ չի մեկնաբանել:

Միջադեպից ժամեր անց Լեհաստանը եւս հայտարարել է օդային գործողությունների մեկնարկի մասին՝ Ուկրաինայի սահմանամերձ տարածքներում ռուսական անօդաչուների հարվածների պատճառով: Բալթյան երկրները 2022 թվականից պարբերաբար հայտնում են իրենց օդային տարածք անօդաչուների ներխուժման մասին: Euronews-ի փոխանցմամբ՝ Եվրոպացի պաշտոնյաները միջադեպերը կապում են Ռուսաստանի կողմից Ուկրաինայի ուղղությամբ արձակված անօդաչուների շեղումների հետ:

Ա. Վ.

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

ԲԺՇԿՈՒՀՈՒՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՔԱԴՐՎԵԼ

2024 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 02:00-ի սահմաններում, «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ է ընդունվել Գոհար Տիգրանի Հովհաննիսյանը, ում մոտ ախտորոշվել է «Հղիություն 37-38 շաբաթական, չափավոր գերջրություն, ճարպակալում 2-րդ աստիճան, անեմիա 1-ին աստիճան»:

Այսպես. 2024 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 08:30-ին եւ դրան հաջորդող ժամանակահատվածում, «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մանկաբարձ-գինեկոլոգ, բժիշկ Աննա Վարդանի Մարգարյանը, իր եւ «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության միջեւ 2013 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված թիվ 13/4 աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաեւ 1996 թվականի մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների ուժով հանդիսանալով բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձ եւ իր վրա դրված պարտականությունների ուժով պարտավորված լինելով պատշաճ կազմակերպել Գոհար Հովհաննիսյանի ծնունդօգնությունը, որպես բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգ ունենալով համապատասխան բարձրագույն մասնագիտական բժշկական կրթություն իր մասնագիտական պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանք, այն է՝ Գոհար Հովհաննիսյանի արական սեռի պտուղը ծնվել է մահացած վիճակում:

Մասնավորապես, մանկաբարձ-գինեկոլոգ Աննա Մարգարյանը 2024 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 08:30-ին, Գոհար Հովհաննիսյանի մոտ արձանագրված պտղի սրտի զարկերի ոչ նորմալ՝ ցածր 100-110-120 զարկ րոպեում ցուցանիշների պայմաններում, նկատի ունենալով դրան նոխորդող ժամկետներում սրտի բաբախի նորմալ ցուցանիշների (154, 136 զարկ րոպե) վերաբերյալ արձանագրված տվյալները, հաշվի առնելով նաեւ 06:00-ին կատարված պտղապարկի հատմամբ ստացված չափավոր պղտոր, դեղնականաչավուն պտղաջրերի բնույթը, ժամը 08:30-ից սկսած, չի իրականացրել պտղի սրտի զարկերի մշտական մոնիթորինգ՝ տվյալ ցուցանիշների դինամիկայում կրած փոփոխությունների գնահատման արդյունքներից ելնելով հնարավոր կեսարյան հատմամբ շտապ կարգով ծննդալուծում իրականացնելու նպատակով:

Բացի այդ, բժիշկ Աննա Մարգարյանը Գոհար Հովհաննիսյանի պտղի սրտի զարկերի հաջորդ լսումը իրականացրել է ուշացումով՝ 15 րոպե անց, որտեղ կատարված հետազոտությամբ արձանագրվել է նախորդի համեմատ վատթարացմամբ տարբերվող՝ պտղի մոտ հիպոքսիայի հարաճուն զարգացմանը բնորոշ, պտղի սրտի զարկերի 80-90 զարկ րոպե ցուցանիշ, սակայն անգամ նման պայմաններում Աննա Մարգարյանը անհապաղ ձեռնամուխ չի եղել ակտիվ մանկաբարձական տակտիկայի՝ տվյալ դեպքում շտապ կարգով կեսարյան հատմամբ ծննդալուծման կազմակերպմանն ու իրականացմանը, ինչը իրատեսական հնարավորություններ կընձեռեր խուսափել պտղի մոտ հիպոքսիկ բարդությունների հարաճուն զարգացումից՝ հնարավորություն ընձեռելով փրկել պտղի կյանքը:

Նման պայմաններում, «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մանկաբարձ-գինեկոլոգ՝ բժիշկ Աննա Վարդանի Մարգարյանը ոչ պատշաճ կերպով է կատարել իր մասնագիտական պատականությունները, ինչի արդյունքում անզգուշությամբ առաջացել է այլ ծանր հետեւանք, մասնավորապես Գոհար Հովհաննիսյանի պղի մոտ առաջացել է սուր հիպոքսիայի հարաճուն զարգացում, եւ վերջինիս արական սեռի պտուղը ծնվել է մահացած վիճակում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԺԱՄԱՑՈՒՅՑ՝ ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի արտաքին կապերի եւ արարողակարգի բաժնի պետ Հասմիկ Խաչատրյանը 2026թ. հունվարին 125 հազար դրամ գնահատված արժեքով ժամացույց է ստացել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Խաչատրյանը նվերի հաշվառման ձեւաթուղթը ներկայացրել է 2026թ. սեպտեմբերի 10-ին: Ձեւաթղթի համաձայն՝նա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում արտաքին կապերի եւ արարողակարգի բաժնի պետի պաշտոնը զբաղեցնում է 2021 թվականի նոյեմբերի 19-ից: Խաչատրյանին հանձնված նվերը ձեռքի ժամացույց է: Ձեւաթղթում նշվում է, որ այն տրամադրվել է որպես հուշանվեր՝ ծառայողական պարտականությունները պատշաճ եւ բարեխղճորեն կատարելու, արարողակարգային գործընթացների կազմակերպման եւ միջազգային համագործակցության ոլորտներում ներդրած նշանակալի ավանդի, ինչպես նաեւ արդյունավետ աշխատանքային գործունեության համար: Նվերի ստացման հանգամանքը ձեւաթղթում նշված է որպես խրախուսում՝ աշխատանքային վերջին օրվա կապակցությամբ: Նվերի ստացողի կողմից գնահատված արժեքը կազմել է 125 հազար դրամ: ArmLur.am-ը ուսումնասիրում է պետական պաշտոնյաների եւ հանրային ծառայողների կողմից ստացված նվերների վերաբերյալ ներկայացված հայտարարագրերն ու հաշվառման ձեւաթղթերը:

Ս. Գ.

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՔԿՀ ԾԱՌԱՅՈՂԸ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Արթիկ» տարածքային բաժնում ստացվել էին տեղեկություններ այն մասին, որ ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողը զբաղվում է թմրամիջոցների իրացմամբ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտում: Ստացված տեղեկությունների համաձայն՝ նշված ծառայողը սեպտեմբերի 13-ին նախատեսել էր որոշակի նյութական շահագրգռվածության դիմաց թմրամիջոց փոխանցել ազատազրկված անձանց: Իրացնելով օպերատիվ տեղեկությունները՝ սեպտեմբերի 13-ին նույն տարածքային բաժնի ծառայողները «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողների հետ համատեղ խուզարկության են ենթարկել վերոնշյալ ծառայողին, ինչի արդյունքում նրա մոտից հայտնաբերվել է թմրամիջոցի նմանվող, 0,46 գրամ քաշով, սպիտակ, փոշենման զանգված: Վերոնշյալ ծառայողը ձերբակալվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Արթիկ» տարածքային բաժնի աշխատակիցների կողմից եւ հայտնաբերված զանգվածի հետ միասին ներկայացվել ՔԿ Շիրակի մարզային վարչության Արթիկի եւ Անիի քննչական բաժին:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ ԴԵՊՔ

Սեպտեմբերի 13-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Շիրակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության Տավուշի մարզային վարչության Բերդի տեղամասի ծառայողները, ՇՄՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի Բերդի անտառպետության 1-ին պահաբաժնում, հսկողական-կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելիս, հայտնաբերել են Բերդ քաղաքի բնակիչ Ա. Ա.-ին՝ բենզասղոցով փռշնի տեսակի ծառեր հատելիս:

Էկոպարեկային ծառայողների կանխարգելիչ եւ հսկողական գործողությունների արդյունքում ապօրինի ծառահատման աշխատանքներն անմիջապես դադարեցվել են, կանխվել է ապօրինի ծառահատման հետագա իրականացումը: Դեպքի առթիվ հաշվարկվել է բուսական աշխարհին պատճառված վնասի չափը, իսկ իրավախախտման վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն: Էկոպարեկային ծառայությունը շարունակաբար իրականացնում է հետեւողական հսկողական եւ կանխարգելիչ միջոցառումներ անտառային տարածքներում՝ ապօրինի գործողությունները ժամանակին կանխելու եւ հայտնաբերելու, ինչպես նաեւ իրավախախտումների նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՍԴ-Ն ԿՔՆՆԻ

Սահմանադրական դատարանը կքննի արտերկրում երկար ժամանակ ապրած Հայաստանի քաղաքացիներին քվեարկելու իրավունքից զրկող նոր կարգավորման սահմանադրականությունը: ՍԴ-ն վարույթ է ընդունել նախորդ գումարման Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավորների դիմումը: Գործը կքննվի դեկտեմբերի 22-ին՝ գրավոր ընթացակարգով, պատասխանող կողմը Ազգային ժողովն է:

Խոսքը հուլիսի 3-ին ընդունված փոփոխությունների մասին է, որոնցով ընտրելու իրավունքից զրկվում են այն քաղաքացիները, որոնք ընտրացուցակների հրապարակմանը նախորդող երկու տարվա ընթացքում առնվազն մեկ տարի Հայաստանում չեն գտնվել: Բացառություն է նախատեսված արտերկրում սովորողների եւ պետական գործուղման մեկնածների համար:

Փոփոխություններն ընդունվել էին հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններից մի քանի շաբաթ անց՝ հրատապ կարգով:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում ավարտվել է Սեւան համայնքի նախկին ղեկավար Ռ.Ղ.-ի կողմից՝ իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ռ.Ղ.-ն, 2012 թվականի նոյեմբերի 5-ից մինչեւ 2016 թվականի նոյեմբերի 3-ը զբաղեցնելով Սեւան համայնքի ղեկավարի պաշտոնը, նույն համայնքի ավագանու մի շարք անդամների, ինչպես նաեւ իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող 2 անձանց օժանդակությամբ, իշխանական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 2015 թվականի օգոստոսի 26-ին Սեւան համայնքին պատկանող, հասարակական նպատակային նշանակության՝ այդ պահին 18 մլն 940 հզր ՀՀ դրամ արժեք ունեցող անշարժ գույքը շուկայականից էական ցածր արժեքով՝ 5 մլն 200 հզր ՀՀ դրամով, վաճառել է ավագանու անդամներից մեկի մորը:

Նշված գործողության հետեւանքով Սեւան համայնքին պատճառվել է առանձնապես խոշոր չափերով՝ 13 մլն 740 հզր ՀՀ դրամի գույքային վնաս:

Նախաքննության ընթացքում Սեւան համայնքի նախկին ղեկավար Ռ.Ղ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ վստահված, առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելու համար, 11 անձի նկատմամբ՝ վստահված, առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելուն օժանդակելու, եւս մեկ անձի նկատմամբ՝ վստահված, առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելուն օժանդակելու եւ փաստաթղթեր կեղծելու համար:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

● *Սեպտեմբերի 7-ից 14-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 6124 խախտում:*

ԲՀԿ

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը հայտարարություն է տարածել, որտեղ նշված է.

««Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, անկախ բոլոր անարդարություններից ու իր դեմ իրականացված բռնաճնշումներից, շարունակելու է իր դերակատարությունը ունենալ Հայաստանի հանրային, քաղաքական կյանքում:

Ժողովրդին հուզող խնդիրները, պետության առջեւ կանգնած մարտահրավերները լինելու են մեր օրակարգը, եւ մենք, հավատարիմ մեր ծրագրին, առաջարկելու ենք մեր մոտեցումները, մեր լուծումները եւ դրանք ներկայացնելու ենք մեր հասարակությանը:

Մենք հավատարիմ ենք մեր ընտրողներին, հասարակությանը մեր տված խոստումներին: Մեզ համար ուղենիշային է ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի՝ ամիսներ առաջ տված ձեւակերպումը, որ «այս ծրագիրը մեկ ամսվա կամ մեկ ընտրության համար չէ»:

Մենք կարեւորում ենք նաեւ միջազգային մեր գործընկերների հետ աշխատանքը եւ հանձնառու ենք պաշտպանելու Հայաստանի եւ հայ ժողովրդի շահը բոլոր միջազգային հարթակներում: Մենք կարեւորում ենք երկրի ներսում տարբեր քաղաքական, հասարակական միավորների հետ համագործակցությունը՝ ի շահ մեր պետության:

Ցանկանում ենք ընդգծել մեր կուսակցության առաջնորդի առանցքային ձեւակերպումը. Հայաստանի համար պատմական այս բարդ փուլում կարեւորագույն գործոնը ներքին համերաշխությունն է:

Այդ համերաշխությունը, ցավոք, խաթարված է, եւ դրա ապացույցներից մեկն էլ մեր առաջնորդ Գագիկ Ծառուկյանի ապօրինի ազատազրկումն է: Նրա ազատ արձակումը եւ բարի համբավի պաշտպանությունը մեր պայքարի առանցքային պահանջներից են: Այդ պայքարը չի դադարելու ոչ մի վայրկյան, քանի դեռ արդարությունը վերականգնված չէ: Գագիկ Ծառուկյանի անձնական բարձր վարկանիշը, հանրային լայն աջակցությունը եւ դժվար իրավիճակներում նրա դրսեւորած արժանապատիվ կեցվածքը մեծ վստահություն ու ամրություն են տալիս մեզ բոլորիս:

Ազատությո՛ւն Գագիկ Ծառուկյանին, ազատությո՛ւն բոլոր քաղբանտարկյալներին, ազատությո՛ւն՝ Բաքվում պահվող հայորդիներին:

1.ԲՀԿ տարածքային կառույցների համակարգման գրասենյակի ղեկավար Արմեն Մանուկյան

2.ԲՀԿ տարածքային կառույցների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արթուր Աղբալյան

3.ԲՀԿ Աշտարակի տարածքային կառույցի ղեկավար Նորա Առուստամյան

4.ԲՀԿ Ապարանի տարածքային կառույցի ղեկավար Կարեն Գրիգորյան

5.ԲՀԿ Թալինի տարածքային կառույցի ղեկավար Արծվիկ Նիկողոսյան

6.ԲՀԿ Մասիսի տարածքային կառույցի ղեկավար Կամո Կակոյան

7.ԲՀԿ Արտաշատի տարածքային կառույցի ղեկավար Դավիթ Դավթյան

8.ԲՀԿ Արարատի տարածքային կառույցի ղեկավար Արամ Միրզոյան

9.ԲՀԿ Արմավիրի տարածքային կառույցի ղեկավար Արման Փիրոյան

10.ԲՀԿ Մեծամորի տարածքային կառույցի ղեկավար Արթուր Հովհաննիսյան

11.ԲՀԿ Բաղրամյանի տարածքային կառույցի ղեկավար Սեւակ Մարգարյան

12.ԲՀԿ Փարաքարի տարածքային կառույցի ղեկավար Ոսկան Թովմասյան

13.ԲՀԿ Վաղարշապատի տարածքային կառույցի ղեկավար Լեւոն Հովհաննիսյան

14.ԲՀԿ Գավառի տարածքային կառույցի ղեկավար Արամայիս Ապրոյան,-Հարություն Ավետիսյան

15.ԲՀԿ Վարդենիսի տարածքային կառույցի ղեկավար Արման Դավթյան

16.ԲՀԿ Գեղամասարի տարածքային կառույցի ղեկավար Վաչագան Մարգարյան

17.ԲՀԿ Ճամբարակի տարածքային կառույցի ղեկավար Նիկոլայ Հովհաննիսյան

18.ԲՀԿ Մարտունու տարածքային կառույցի ղեկավար Սեւակ Կարապետյան, Վաչագան Սարգսյան, Արման Վանոյան

19.ԲՀԿ Վանաձորի տարածքային կառույցի ղեկավար Էդգար Բոջուկյան

20.ԲՀԿ Սպիտակի տարածքային կառույցի ղեկավար Միշա Թամամյան, Արգամ Մաթոսյան

21.ԲՀԿ Ալավերդու տարածքային կառույցի ղեկավար Ռոման Կոնինյան

22.ԲՀԿ Ստեփանավանի տարածքային կառույցի ղեկավար Հարություն Ղարագյոզյան

23.ԲՀԿ Թումանյանի տարածքային կառույցի ղեկավար Ռոման Շաքարյան

24.ԲՀԿ Աշոցքի տարածքային կառույցի ղեկավար Վարուժան Հարությունյան

25.ԲՀԿ Գյումրու տարածքային կառույցի ղեկավար Արմեն Բադոյան

26.ԲՀԿ Ախուրյանի տարածքային կառույցի ղեկավար Կարեն Սերգոյան

27.ԲՀԿ Մարալիկի տարածքային կառույցի ղեկավար-Արտակ Ավդալյան

28.ԲՀԿ Եղեգնաձորի տարածքային կառույցի ղեկավար Հրաչյա Վարդանյան

29.ԲՀԿ Իջեւանի տարածքային կառույցի ղեկավար Արա Իսրայելյան

30.ԲՀԿ Դիլիջանի տարածքային կառույցի ղեկավար Արթուր Սարգսյան

31.ԲՀԿ Բերդի տարածքային կառույցի ղեկավար Արսեն Փալանդուզյան

32.ԲՀԿ Նոյեմբերյանի տարածքային կառույցի ղեկավար Սեյրան Մամյան

33.ԲՀԿ Կապանի տարածքային կառույցի ղեկավար Գրիշա Մնացականյան

34.ԲՀԿ Սիսիանի տարածքային կառույցի ղեկավար Ստեփան Սաֆրազյան

35.ԲՀԿ Գորիսի տարածքային կառույցի ղեկավար Ռոբերտ Հակոբյան

36.ԲՀԿ Մեղրի-Ագարակ տարածքային կառույցի ղեկավար Սաթենիկ Կարապետյան

37.ԲՀԿ Հրազդանի տարածքային կառույցի ղեկավար Մխիթար Հարությունյան

38.ԲՀԿ Չարենցավանի տարածքային կառույցի ղեկավար Գայանե Գրիգորյան

39.ԲՀԿ Աբովյանի տարածքային կառույցի ղեկավար-Արմեն Քոսակյան

40.ԲՀԿ Դավթաշենի տարածքային կառույցի ղեկավար Մարատ Ղազարյան

41.ԲՀԿ Ջեյթունի տարածքային կառույցի ղեկավար Հակոբ Այվազյան

42.ԲՀԿ Մալաթիա-Սեբաստիա տարածքային կառույցի ղեկավար Արմեն Թորոսյան, Արշակ Խաչատրյան

43.ԲՀԿ Բանգլադեշի տարածքային կառույցի ղեկավար Անահիտ Ստեփանյան

44.ԲՀԿ Աջափնյակի տարածքային կառույցի ղեկավար Արթուր Հերոյան

45.ԲՀԿ Չարբախի տարածքային կառույցի ղեկավար Էրիկ Գրիգորյան

46.ԲՀԿ Նոր Նորքի տարածքային կառույցի ղեկավար Ռուբեն Խաչատրյան

47.ԲՀԿ Նորք Մարաշի տարածքային կառույցի ղեկավար Միքայել Առուշանյան»:

ՈՒՂԵԾԻՐ Է ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԵՆՔ

ԱՄՆ-ն առաջին անգամ պաշտոնապես հաստատել է, որ Երկրի ուղեծիր է տեղակայել տիեզերական զենք՝ արձանագրելով երկրի կողմից նման հարձակողական հնարավորության կիրառման առաջին հրապարակային հաստատումը:

ԱՄՆ ռազմաօդային ուժերի նախարար Թրոյ Մեյնկը հայտարարել է, որ ուղեծրում տեղակայված այդ զենքն անհրաժեշտ է ամերիկյան ուժերին հակառակորդների հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար: Նրա խոսքով՝ ԱՄՆ-ը պատրաստ է արձագանքել «զարգացող սպառնալիքներին», սակայն նախարարը չի մանրամասնել, թե ինչ հնարավորություններ ունի համակարգը եւ երբ է այն դուրս բերվել ուղեծիր:

ԱՄՆ զինված ուժերի ղեկավարները նախկինում բազմիցս հայտարարել էին տիեզերքում ռազմական կարողությունների ընդլայնման ծրագրերի մասին՝ մատնանշելով Ռուսաստանի եւ Չինաստանի կողմից այնպիսի տեխնոլոգիաների զարգացումը, որոնք ապագա հակամարտության դեպքում կարող են օգտագործվել ամերիկյան արբանյակների վրա հարձակվելու կամ դրանց աշխատանքը խափանելու համար:

Տիեզերական ռազմական կարողությունները, ինչպես նաեւ հակահրթիռային որսացող հրթիռները, առանցքային դեր ունեն ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմի կողմից առաջ մղվող «Golden Dome» պաշտպանական համակարգում, որի նպատակն է պաշտպանել ԱՄՆ-ը հրթիռային եւ օդային այլ սպառնալիքներից:

Տիեզերքում զանգվածային ոչնչացման զենքի տեղակայումն արգելվում է 1967 թվականի միջազգային պայմանագրով: Սակայն պայմանագիրը չի արգելում տիեզերական այլ ռազմական կարողությունների զարգացումը: ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Չինաստանը վերջին տարիներին զարգացնում են հակառակորդի արբանյակներին թիրախավորելու եւ դրանց աշխատանքը խափանելու տարբեր միջոցներ:

Անցած տարի Դոնալդ Թրամփը հրամանագիր էր ստորագրել, որով ընդգծվել էր ԱՄՆ Տիեզերական ուժերի ոչ միայն պաշտպանական, այլեւ հարձակողական նշանակությունը:

ԱՄՆ Տիեզերական ուժերը ստեղծվել են 2019 թվականին եւ դարձել են ավելի քան 70 տարվա ընթացքում ԱՄՆ զինված ուժերի նորագույն ճյուղը: Դրանց հիմնական առաքելություններից է տիեզերքում ամերիկյան ակտիվների, այդ թվում կապի, հետախուզության եւ վերահսկողության համար օգտագործվող հարյուրավոր արբանյակների պաշտպանությունը:

ԱՄՆ Տիեզերական ուժերի ներկայացուցիչը նշել է, որ «տիեզերական վերահսկողությունը» ներառում է տիեզերական ոլորտում հակառակորդի կարողություններին հակազդելու եւ դրանք սահմանափակելու գործողություններ՝ անհրաժեշտության դեպքում ընդհուպ մինչեւ դրանց ոչնչացումը: Նշվում է, որ այդ կարողությունները կարող են կիրառվել ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական նպատակներով:

Միաժամանակ ԱՄՆ-ը պնդում է, որ Ռուսաստանն ու Չինաստանը եւս զարգացնում են հակատիեզերական ռազմական հնարավորություններ: ԱՄՆ Տիեզերական ուժերի գնահատմամբ՝ Չինաստանը դրանք զարգացնում է ռազմական արդիականացման շրջանակում, իսկ Ռուսաստանը տիեզերքը դիտարկում է որպես ռազմական գործողությունների առանձին ոլորտ եւ կարծում է, որ ապագա հակամարտություններում տիեզերական գերակայությունը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Մարզերում պարեկները սեպտեմբերի 7-ից 14-ը հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 15787 խախտում:*

IDBANK

ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

IDBank-ը միացել է Visa-ին եւ Wizz Air-ին՝ Հայաստանում ճամփորդական փորձառության նոր մակարդակ ձեւավորելու նպատակով՝ դաշտոնապես թողարկելով IDBank Visa Wizz Air Platinum ֆորբենդային ճամփորդական քարտը:

IDBank-ի, Visa-ի եւ Wizz Air-ի ներկայացուցիչները մասնակցել են մեկնարկի արարողությանը՝ ընդգծելով ճամփորդական նորարարական լուծումների մշակման եւ հայաստանյան շուկայում հաճախորդների փորձառության բարելավման կարեւորությունը:

Ներկայացնելով ԱՊՀ եւ Հարավարեւելյան Եվրոպայի տարածաշրջանում առաջին ճամփորդական բացառիկ հնարավորություններ առաջարկող այս դասի քարտը՝ IDBank-ի վարչության նախագահ Մհեր Աբրահամյանն ընդգծեց, որ այն միավորում է միջազգային բարձր չափանիշները, ճամփորդական լայն հնարավորություններն ու ֆինանսական ակնհայտ առավելությունները:

«IDBank-ի որդեգրած ռազմավարության հիմքում հաճախորդամետությունն է: Մեզ համար անչափ կարեւոր է, որ յուրաքանչյուր միջազգային նախագիծ վերածվի մեր հաճախորդների կյանքի որակը բարելավող լուծման: Visa Wizz Air քարտը հենց այդ տեսլականի մարմնավորումն է. այն դուրս է գալիս սովորական քեշբեքի սահմաններից՝ ապահովելով իրական արժեք ու հարմարավետություն ճանապարհորդության ողջ ընթացքում՝ օդանավակայանից եւ թռիչքից մինչեւ նոր հորիզոնների բացահայտում», - նշեց Մհեր Աբրահամյանը:

«Մեծ ոգեւորությամբ եմ հայտարարում Հայաստանում առաջին քոբրենդային ճամփորդական քարտի մեկնարկի մասին, որը ստեղծվել է հատուկ ժամանակակից ճանապարհորդների համար՝ Wizz Air-ի եւ IDBank-ի հետ գործընկերության արդյունքում: Քարտը նորարարական քայլ է ճամփորդական փորձառությունը վերարժեւորելու եւ Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը նպաստելու մեր առաքելության ճանապարհին: Քարտը միավորում է Visa-ի k-ի հուսալի ֆինանսական ծառայությունները: Մեր հաճախորդներն այժմ կարող են ակնկալել ավելի հաճելի ու շահավետ միջազգային ուղեւորություններ՝ ստանալով լրացուցիչ առավելություններ ինչպես ճամփորդելիս, այնպես էլ առօրյա գնումներ կատարելիս: Այս համագործակցությունն ընդգծում է միջազգային լավագույն փորձը հայաստանցի հաճախորդներին հասանելի դարձնելու մեր հանձնառությունը եւ ազդարարում այն գործընկերության առաջին քայլը, որը մենք մտադիր ենք էլ ավելի ընդլայնել», - նշեց Կովկասում եւ Մոլդովայում Visa-ի տարածաշրջանային մենեջեր Դիանա Կիգուրաձեն:

«Visa-ի հետ այս ռազմավարական գործընկերության միջոցով մենք էլ ավելի ենք ընդլայնում մեր արագ աճող ներկայությունը Հայաստանում եւ ուրախ ենք, որ այդ ճանապարհին մեզ առաջինը տարածաշրջանում միացել է IDBank-ը: Հայաստանը Wizz Air-ի համար կարեւոր շուկա է, եւ մենք մշտապես փնտրում ենք նոր հնարավորություններ՝ մեր հաճախորդների համար ճամփորդությունն ավելի հասանելի, հարմարավետ եւ շահավետ դարձնելու համար: IDBank-ի Wizz Air քոբրենդային Visa Platinum ճամփորդական քարտի թողարկումը մեզ հնարավորություն է տալիս էլ ավելի մեծ արժեք առաջարկել հայաստանցի ճանապարհորդներին՝ համատեղելով մատչելի ավիափոխադրումների առավելություններն ու ողջ ուղեւորության ընթացքում հասանելի լրացուցիչ արտոնությունները: Լիահույս ենք, որ այս համագործակցությունն էլ ավելի կընդլայնվի, ինչպես նաեւ ուրախ կլինենք մեր օդանավերում ողջունել էլ ավելի շատ հայ ուղեւորների», - ասաց Wizz Air-ի գլխավոր կոմերցիոն տնօրեն Իան Մալինը:

Նոր քարտը մշակված է հատուկ հաճախակի ճամփորդողների եւ Wizz Air-ի հաճախորդների համար: Քարտապանները ստանում են՝

20 եվրոյին համարժեք Welcome Bonus Wizz Air դրամապանակին,

Wizz Air Discount Club Standard անվճար անդամակցություն,

10% idcoin GetTransfer.com-ով կատարված վճարումների դեպքում,

մինչեւ 3% քեշբեք (cashback) Wizz Air-ից կատարված գնումների համար,

մինչեւ 1.5% քեշբեք (cashback) ռեստորաններում, սուպերմարկետներում, կացության, հագուստի եւ նորաձեւության ոլորտներում վճարումներ կատարելիս,

մինչեւ 1% քեշբեք (cashback) այլ վճարումներից, որոնք կփոխանցվեն անմիջապես Wizz օգտահաշվի դրամապանակին (Wizz Account wallet):

Քեշբեքերի նկատմամբ կիրառելի է ամսական առավելագույն սահմանաչափ՝ 20 000 դրամ գումարի չափով (համարժեք եվրո)՝ օրացուցային ամսվա ընթացքում կատարված քարտային գործարքների նկատմամբ: Քեշբեքը հաշվարկվում է նվազագույն 5 000 ՀՀ դրամի չափով գործարք կատարելու դեպքում:

Քարտը տրամադրում է նաեւ ճամփորդական պրեմիում արտոնությունների լայն փաթեթ՝ զեղչեր ճամփորդական ապահովագրության եւ ավտոմեքենաների վարձույթի համար, մուտք օդանավակայանների սպասասրահներ, անվճար Fast Track՝ միջազգային եւ Զվարթնոց օդանավակայաններում: Քարտի թվային տարբերակն արդեն հասանելի է, իսկ ֆիզիկական քարտը հնարավոր կլինի պատվիրել շուտով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից
010-59-33-33

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2026թ-ի հոկտեմբերի 5-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 222 լոտ՝ ոսկյա զարդեր 52.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 52.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.497.100 ՀՀ դրամ: Թիվ 229 լոտ՝ ոսկյա ջարդոն 7.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 3.6գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 102.700 ՀՀ դրամ: Թիվ 232 լոտ՝ ոսկյա զարդեր 20.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 20.7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 590.300 ՀՀ դրամ: Թիվ 233 լոտ՝ ոսկյա զարդեր 17.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 17գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 484.800 ՀՀ դրամ: Թիվ 235 լոտ՝ ոսկյա զարդ 2.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 2.8գր 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 79.800 ՀՀ դրամ: Թիվ 245 լոտ՝ ոսկյա ջարդոն 14.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 12.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 356.500 ՀՀ դրամ: Թիվ 246 լոտ՝ ոսկյա ջարդոն 2.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 2.6գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 74.100 ՀՀ դրամ: Թիվ 247 լոտ՝ ոսկյա զարդեր 73գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 72գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 2.053.200 ՀՀ դրամ: Թիվ 248 լոտ՝ ոսկյա ջարդոն 26.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 24գր), որից 21.7գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 20գր) 585 հարգի՝ 570.300 ՀՀ դրամ, 4.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 4գր) 500 հարգի՝ 97.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 667.800 ՀՀ դրամ: Թիվ 250 լոտ՝ ոսկյա ջարդոն 29.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 28գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 798.500 ՀՀ դրամ: Թիվ 262 լոտ՝ ոսկյա զարդ 3.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 2.8գր 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 79.800 ՀՀ դրամ: Թիվ 263 լոտ՝ ոսկյա ջարդոն 3.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 3գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 85.500 ՀՀ դրամ: Թիվ 265 լոտ՝ ոսկյա ջարդոն 19.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 16.8գր), որից 19.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 16.4գր) 585 հարգի՝ 467.700 ՀՀ դրամ, 0.5գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 0.4գր) 500 հարգի՝ 9.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 477.400 ՀՀ դրամ: Թիվ 268 լոտ՝ ոսկյա ջարդոն 13.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 12գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 342.200 ՀՀ դրամ: Թիվ 269 լոտ՝ ոսկյա ջարդոն 83.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 76գր), որից 56.1գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 50գր) 585 հարգի՝ 1.425.800 ՀՀ դրամ, 27.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 26գր) 500 հարգի՝ 633.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 2.059.500 ՀՀ դրամ: Թիվ 271 լոտ՝ ոսկյա զարդ 3.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 3.1գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 88.400 ՀՀ դրամ: Թիվ 279 լոտ՝ ոսկյա ջարդոն 13.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 11.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 327.900 ՀՀ դրամ: Թիվ 280 լոտ՝ ոսկյա ջարդոն 3.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 2.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 71.300 ՀՀ դրամ: Թիվ 283 լոտ՝ ոսկյա ջարդոն 22.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 20.8գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 593.000 ՀՀ դրամ: Թիվ 284 լոտ՝ ոսկյա ջարդոն 31.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 27գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 770.000 ՀՀ դրամ: Թիվ 285 լոտ՝ ոսկյա ջարդոն 6.7գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 6.5գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 158.400 ՀՀ դրամ: Թիվ 286 լոտ՝ ոսկյա ջարդոն 3.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 3գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 85.500 ՀՀ դրամ: Թիվ 290 լոտ՝ ոսկյա ջարդոն 5.9գր ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 168.250 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ 043004227

Յունիբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԱՐԱԳ ԱՃ, ՈՐԱԿՅԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բանկային ոլորտը շարունակում է արագ փոխվել՝ ձեւավորելով նոր կանոններ եւ սպասումներ: Թվայնացումը, մրցակցության աճը եւ հաճախորդների վարքագծի փոփոխությունն ստիպում են ֆինանսական կառույցներին վերանայել իրենց մոտեցումները եւ կառուցել ավելի ճկուն ու երկարաժամկետ ռազմավարություններ: Այս համատեքստում Ֆասթ Բանկը հանդես է գալիս որպես ակտիվ եւ դինամիկ խաղացող՝ կենտրոնանալով ոչ միայն աճի, այլ նաեւ արժեք ստեղծող լուծումների վրա: Այսօր զրուցելու ենք անկի զարգացման տնօրեն Արմինե Տեր-Հովսեփյանի հետ:

-Տիկին Տեր-Հովսեփյան, ինչպիսի՞ զարգացման փուլում է այսօր գտնվում Ֆասթ Բանկը, եւ որո՞նք են ձեր հիմնական ռազմավարական ուղղությունները:

-Առաջին հերթին կուզենայի նշել, որ Ֆասթ Բանկում մենք ռազմավարությունը կառուցում ենք հիմնարար եւ արժեք ստեղծող գաղափարների վրա: Այսօր Ֆասթ Բանկը գտնվում է զարգացման կարեւոր փուլերից մեկում եւ մեր առաջադեմ աճի, մասշտաբավորման քաղաքականության ռազմավարությանը զուգահեռ մեզ համար այս փուլում էական կարեւորություն ունի զարգացման որակական հեռանկարը: Ուստի, մեր մոտակա տարիների ռազմավարության հիմքում առկա են 4 այդպես կոչված հենասյուներ, ուղենիշեր, որոնց վրա կառուցվում է ամբողջ ռազմավարությունը: Առաջին հերթին, ինչպես արդեն նշեցի, դա մասշտաբավորման եւ արագ աճի քաղաքականությունն է՝նոր շուկաների, նոր սեգմենտների ներգրավումը: Երկրորդ կարեւորագույն կետերից մեկը հաճախորդի ամբողջական, լավագույն կենսափորձի ապահովումն է, սպասարկման որակի գերազանցությունը: Հաջորդիվ, ընդհանուր արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները թե՛ բիզնես արդյունավետության, թե՛ գործառնական արդյունավետության:

Եվ վերջինը, ոչ պակաս կարեւոր, դա կորպորատիվ կառավարման, կորպորատիվ մշակույթի եւ ընդհանուր առմամբ որակի նոր նշաձողի ապահովումն է: Եվ ինձ համար շատ կարեւոր է այն փաստը, որ նշված բոլոր գաղափարները ծառայում են ամեն օր հաճախորդի եւս մեկ քայլ ավելի բարեկեցիկ եւ լավ ծառայություններ մատուցելու նպատակին:

- Ի՞նչ սկզբունքներով է Ֆասթ Բանկը ձեւավորում հաճախորդների սպասարկման մշակույթը:

-Մեզ համար սպասարկման որակը միայն չափանիշ չէ, այլ ըստ էության աշխատանքային մշակույթ: Մենք հավատում ենք, որ հաճախորդի կենսափորձը, այն փորձառությունը, որը վերջինս ստանում է Բանկի հետ շփվելիս, այն տպավորությունը, այն էմոցիան... դրանք են հենց հիմնական մրցակցային առավելություններն այսօր, քանզի պրոդուկտներով եւ ծառայություններով այժմ մրցելը բավարար չէ: Եվ հավատացնում ենք եւ հավատում ենք այն մտքին, որ հենց այդ էմոցիան, տպավորությունը, որը կստեղծի հաճախորդը մեզ հետ առնչվելիս ցանկացած ուղիով թե՛ մասնաճյուղերում, թե՛ հեռահար պրոցեսներում առնչվելիս տարբեր գործիքակազմերի հետ, դա է, որ կստիպի իրեն հետագայում նորից եւ նորից վերադառնալ մեզ մոտ:

-Ինչպե՞ս է Ֆասթ Բանկի զարգացման ռազմավարությունն արտացոլվում մարքեթինգային մոտեցումների եւ բրենդի զարգացման մեջ:

-Մենք ձգտում ենք չլինել միջինացած լավը, այլ լինել լավագույնը եւ տարբերվել, երբեմն լինել համարձակ, տարբերվող: Եվ ամենակարեւոր սկզբունքներից է մեր մարքեթինգային ռազմավարության՝ լինել մարդկանց մոտ, մարդկանց համար հասկանալի եւ պարզ:

Մեր բրենդի տարբերակիչ սկզբունքն է նաեւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը: Մենք հավատում ենք, որ հասարակության կյանքը, հասարակության բարօրության ամրապնդումն ու զարգացումը նպաստում են նաեւ բրենդի ճիշտ եւ ավելի դրական ընկալմանը, ուստի մեծ քանակով նախաձեռնություններ ունենք այդ ուղղությամբ, ինչպես օրինակ կրթական, սպորտի եւ մշակութային ոլորտներում: Անհրաժեշտ է նշել, որ անցյալ տարի 600 միլիոն դրամի նախաձեռնություններ են իրականացվել հենց այս ուղղությամբ:

-Տիկի՛ն Տեր-Հովսեփյան, ինչպե՞ս է Ֆասթ Բանկում գաղափարը վերածվում իրական նախագծի եւ ինչպե՞ս եք ապահովում դրանց արդյունավետ իրագործումը:

-Այսօր շատերիս մոտ շատ կառույցներում են ծնվում մտքեր, գաղափարներ, որոնք պակաս կարեւոր չեն եւ կարող են դառնալ մեծ փոփոխությունների աղբյուրներ: Բայց այդ մտքերից ոչ բոլորն են հաջողության հասնում հենց այն հանգամանքից ելնելով, որ իրագործման բարդ ճանապարհին կորում է հիմնական գաղափարը եւ արդյունքն իր վերջնական ավարտին չի հասնում: Շատ կարեւոր է բացի ունենալուց համապատասխան ներուժը, տեխնիկական հնարավորությունները եւ կադրային ռեսուրսը, համակարգը, կառույցը գործի փոխընկալման պայմաններում: Այսինքն՝ օրինակ IT գործընկերներն ավելի լավ ընկալեն եւ հասկանան ինչ է ուզում բիզնեսը, եւ հակառակը՝ բիզնես գործընկերները կարողանան պատկերացնել, թե տվյալ նախագծի եւ ցանկության ներքո ինչ աշխատանք, ինչ տեխնիկական լուծումներ են պահանջվում: Եվ հավատացնում եմ այդ ընկալման, այդ սիներգիայի արդյունքում նախագծերն իհարկե հասնում են հաջողության:

Եվ ամփոփելով, կարծում եմ, որ ցանկացած նախագիծ՝ փոքր, թե մեգանախագիծ կառույցի համար սկսելիս պետք է հստակ հիմնական հարցերի պատասխաններն ունենալ՝ ինչ ենք անում, ինչի համար ենք դա անում, ինչպես ենք դա անում եւ երբ ենք ունենալու արդյունքը:

-Ինչպիսի՞ն է այսօր ամենամեծ մարտահրավերը զարգացման տեսանկյունից:

-Այսօր ժամանակին համընթաց քայլելը բավարար չէ, ցավոք, եւ պետք է ժամանակից, համապատասխան տենդենցներից առաջ լինել: Բոլորն արագ են, կա մրցակցություն ակտիվ, մասնավորապես բանկային համակարգում, եւ հետեւաբար արագությունը մտքի եւ նախագծի իրականացման այն հիմնական մարտահրավերն է, որը բերում է հաջողության: Մյուս մարտահրավերը, որը ես կուզենայի առանձնացնել, վերջին ժամանակներում բավական կարեւոր է, դա ավելի գլոբալ է, ընդհանրական է, դա ապատեղեկատվությունն է, քանի որ ինֆորմացիայի աղբյուրները բազմազան են, ինֆորմացիայի տեսակներն ու ճշմարտությունը բազում է, եւ երբեմն թե՛ ընկերության ներսում, թե՛ գլոբալ շատ կարեւոր է հասկանալ ընդհանուր ընկալում կա՞ որոշ հարցի շուրջ, թե՞ կան տարբեր ընկալումներ:

-Ձեր կարծիքով՝ ի՞նչն է ձեւավորում արդյունավետ առաջնորդին, եւ արդյո՞ք սեռն այստեղ որեւէ կապ ունի:

-Առհասարակ, կարծում եմ՝ առաջնորդությունը, ըստ էության սեռով չի որոշվում, այլ որոշվում է գիտելիքներով, ունակություններով եւ ամենակարեւորն այն արդյունքով, ինչ տվյալ աշխատակիցը, տվյալ ղեկավարը կարողանում է տալ ընկերությանը: Սակայն, միեւնույն ժամանակ, լինելով կին, ով ունի երկու փոքրիկ մանկահասակ երեխաներ, շատ լավ պատկերացնում եւ հասկանում եմ, թե երբեմն ինչքան բարդ է լինում համատեղել առօրյա հոգսերը եւ աշխատանքում գերազանցությունը, եւ արդյունքում իմ անձնական փորձից ելնելով, կարող եմ ասել, որ կանայք շատ հաճախ, կամ գրեթե միշտ կարողանում են զարգացնել մի ունակություն, մի հմտություն, որի արդյունքում կարողանում են միաժամանակ մի քանի ուղղությամբյուն: Եվ անպայման կուզեմ նշել, որ շատ կարեւոր է նաեւ այս հարցում այն կառույցը, այն մշակույթը, որտեղ աշխատակիցն աշխատում է, եւ հավատացնում եմ, որ Ֆասթ Բանկն այն միջավայրն ունի զարգանալու... այստեղ կարեւորում են գիտելիքը եւ տրված արդյունքը:

Ֆասթ Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով 24/7 արագ, հարմարավետ եւ անվտանգ ֆինանսական լուծումներ Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՄԱՐՔԱԿԱՆ

ՄՈՈՒՐԻՆՅՈՒՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն արձագանքել է կատալոնական «Բարսելոնայի» իսպանացի Լամին Յամալի՝ «Ոսկե գնդակի» վերաբերյալ արած աղմկահարույց հայտարարությանը:

Նախօրեին երիտասարդ իսպանացին հայտարարել էր, որ աշխարհի լավագույն ֆուտբոլիստի կոչմանն իրենից բացի կարող է հավակնել միայն Կիլիան Մբապեն, սակայն վերջին մրցաշրջաններում նվաճած տիտղոսների շնորհիվ հենց ինքն է առավել շատ արժանի «Ոսկե գնդակին»:

Լրագրողների այն դիտարկմանը, թե Լամինը համարում է, որ բոլորից շատ է արժանի «Ոսկե գնդակին», Մոուրինյուն պատասխանել է. «Ես չեմ կարող մեկնաբանել բոլորի հայտարարությունները: Բայց ես հարգում եմ յուրաքանչյուր ֆուտբոլիստի կարծիքը»,- պորտուգալացի մասնագետի խոսքերն է մեջբերում իսպանական AS պարբերականը, գրում է armsport-ը:

Հավելենք, որ ավարտված մրցաշրջանի արդյունքներով Յամալը «Բարսելոնայի» կազմում դարձել է Իսպանիայի Լա լիգայի չեմպիոն: Բացի այդ, 19-ամյա խաղացողը ազգային հավաքականի կազմում հռչակվել է աշխարհի չեմպիոն:

Հիշեցնենք, որ «Ոսկե գնդակի» դափնեկիրների անունները հայտնի կդառնան հոկտեմբերի 26-ին՝ Լոնդոնում կայանալիք հանդիսավոր արարողության ժամանակ:

Ե՞ՐԲ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ

Հայաստանի ազգային հավաքականի եւ Վարշավայի «Լեգիայի» կիսապաշտպան Վահան Բիչախչյանը մոտենում է ապաքինման փուլի ավարտին: Հայ ֆուտբոլիստը մանրամասնել է իր վերականգնման ընթացքն ու նշել, թե երբ կրկին պատրաստ կլինի միանալ թիմին:

«Շատ մեծ հույս ունեմ, որ եթե ամեն ինչ լավ ընթանա, արդեն հաջորդ շաբաթ կմարզվեմ թիմի ընդհանուր խմբում: Եթե պարապմունքների ընթացքում ամեն ինչ նորմալ լինի, հնարավոր է՝ պատրաստ լինեմ մասնակցել արդեն «Յագելոնիայի» դեմ խաղին»,- ըստ armsport-ի՝ Բիչախչյանի խոսքերը մեջբերում է CANAL+-ը:

Լեհաստանի առաջնության 9-րդ տուրի՝ «Յագելոնիայի» դեմ խաղը կկայանա սեպտեմբերի 20-ին: Եթե մինչ այդ հայ կիսապաշտպանը հասցնի վերականգնվել, կարող է խաղային պրակտիկա ստանալ եւ մարզավիճակ հավաքել մինչեւ Հայաստանի ազգային հավաքականի մոտալուտ հանդիպումները:

Հիշեցնենք, որ Ազգերի լիգայի C լիգայի 2-րդ խմբի շրջանակում մեր ընտրանին մեկնարկային երկու խաղերը կանցկացնի սեփական հարկի տակ: Սեպտեմբերի 25-ին՝ ժամը 20:00-ին, Հայաստանի հավաքականը կմրցի Լատվիայի ընտրանու հետ, իսկ սեպտեմբերի 28-ին՝ նույն ժամին, կընդունի Չեռնոգորիային:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում սեպտեմբերի 19-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Պոչատ աղվեսը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կցանկանայի իմանալ, թե ինչպես կարելի է սեփականաշնորհել կրպակ:

Գայանե Մինասյան

ՊԱՏԱՍԽԱՆ. Առեւտրի կրպակի սեփականաշնորհումը (կամ օրինականացումը) Հայաստանում ուղղակիորեն կախված է նրանից, թե ում է պատկանում այն հողատարածքը, որի վրա տեղադրված է կրպակը, եւ արդյոք այն համարվում է հիմնական (անշարժ), թե ոչ հիմնական (շարժական) շինություն:

Գույքի կարգավիճակի պարզում. Նախքան որեւէ գործողություն անելը անհրաժեշտ է դիմել ՀՀ Կադաստրի կոմիտե՝ ստանալու համար տեղեկատվություն հողատարածքի եւ կրպակի կարգավիճակի մասին: Պարզե՛ք՝ արդյոք հողը համայնքային է, պետական, թե մասնավոր սեփականություն: Ստուգե՛ք՝ կրպակն ունի՞ նախկինից ձեւակերպված վարձակալության կամ օգտագործման պայմանագիր:

Դիմում համայնքապետարան (կամ քաղաքապետարան). Եթե հողը համայնքային է (օրինակ՝ Երեւան քաղաքում), պետք է պաշտոնական դիմում ներկայացնեք համապատասխան վարչական շրջանի կամ քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության բաժին: Եթե կրպակը ոչ հիմնական շինություն է (տաղավար, դռմիկ), համայնքը սովորաբար սեփականության իրավունք չի տալիս, այլ կնքում է հողհատկացման կամ վարձակալության պայմանագիր որոշակի ժամկետով:

Անօրինական (ինքնակամ) կրպակների օրինականացում. Եթե կրպակը տեղադրվել է տարիներ առաջ առանց թույլտվության (ինքնակամ շինություն է), ապա դիմում եք համայնքապետարան՝ ինքնակամ շինությունն օրինականացնելու խնդրանքով: Համայնքը հաշվառում է շինությունը եւ տալիս է պատասխան:

Գրանցում Կադաստրում. Համայնքապետարանի հետ վարձակալության կամ առուվաճառքի պայմանագիրը կնքելուց եւ նոտարական վավերացումից հետո անհրաժեշտ է դիմել Կադաստրի կոմիտե՝ ձեր սեփականության կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականը ստանալու համար:

Կադաստրի կոմիտե

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշները:

Էվելինա Հակոբյան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին: Պետության կողմից կրթաթոշակ տրվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ճամբարակում խոտով բարձված բեռնատարի վարորդը, անվտանգության կանոնները խախտելով, տեղափոխում է 4 անձի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 6 + 11 + 24 + 29
	Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 24 + 27
	Կոտայքի նախալեռներ	+ 14 + 16 + 30 + 32
	Գեղարքունիք	+ 7 + 12 + 21 + 26
	Լոռի	+ 8 + 13 + 24 + 28
	Տավուշ	+ 9 + 13 + 25 + 28
	Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 26
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 17 + 29 + 33

	Արարատ	+ 14 + 17 + 31 + 33
	Արմավիր	+ 13 + 17 + 32 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 24 + 27
	Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 17 + 32 + 34
	Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 19 + 22
	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 27 + 30
	Սյունիքի հովիտներ	+ 14 + 18 + 31 + 34
	Երեւան	+ 17 + 19 + 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*